Հավելված N 15
ՀՀ փոխվարչապետի
N 577-Ն որոշման

«ՓՐԿԱՐԱՐ» ԿՐԾՔԱՆՇԱՆԻ ՏԵՍԱԿԸ, ՁԵՎԸ ԵՎ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ

1. «Փրկարար» կրծքանշանը (ձևը կցվում է) շնորհվում է «Փրկարար» փրկարարի որակավորման դաս ունեցող փրկարարական ծառայողներին:

2. «Փրկարար» կրծքանշանը շնորհում է Նախարարը:

3. «Փրկարար» կրծքանշան ստացող փրկարարական ծառայողը պարտավոր է վերադարձնել փրկարարի որակավորման դասին համապատասխան իրեն նախկինում շնորհված կրծքանշանը:

4. Փրկարարական ծառայությունից ազատվելիս «Փրկարար» կրծքանշանը ենթակա է վերադարձման:

5. «Փրկարար» կրծքանշանի արտագծած շրջանագծի տրամագիծը 35 մմ, արտադրվում է դրոշման եղանակով, առնվազն 75% պղնձի պարունակությամբ համաձուլվածքից: Կրծքանշանն իրենից ներկայացնում է ութաթև պատկեր, որը խորհրդանշում է երկրի չորս կողմերը: Կրծքանշանը բաղկացած է կենտրոնաձիգ թևերից կազմված խաչից, նրա անկյուններում 5 մմ փրկարարի պաշտպանական ուժը բնութագրող սրերից, որոնց հատման կենտրոնական մասում շրջանագծի մեջ հավերժության 12 թերթիկները և փրկարարի ոսկեգույն պարանը հիշեցնող բաժանարար վահանաձև գծերը հիշեցնող պատկերն է, կենտրոնական մասը պատված է էմալով: Խաչի թևերի վրա հայերեն և անգլերեն տառերով նշված են «ՓՐԿԱՐԱՐ», «ՀԱՅԱՍՏԱՆ», «RESCUER» և «ARMENIA» բառերը: Կրծքանշանի վրա չի թույլատրվում՝ պատկերների և գրվածքների աղավաղում:

6. «Փրկարար» կրծքանշանը հակառակ կողմի կենտրոնական մասում ունի պտուտակային ամրակ՝ հագուստի ամրացնելու համար, որի տակ առկա է կրծքանշանի հերթական համարը: Ամրակը բաղկացած է 2 մասից՝ հեղույսից՝ Մ2.5 X 8 մմ չափսերով և պտուտակից՝ 20 մմ տրամագծով:

7. «Փրկարար» կրծքանշանի տուփի արտաքին չափերը հետևյալն են՝ (բարձրություն X լայնություն X երկարություն) 15X60X60 մմ: Պատրաստված է ստվարաթղթից, կրծքանշանի արտաքին եզրագծով հարթակով՝ իր ճշգրիտ դիրքավորման համար:

8. «Փրկարար» կրծքանշանի հետ տրվում է վկայական:

<u>Ձև</u>

«Փրկարար» կրծքանշան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

01.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ